ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 588-Ա **«08» հունիսի 2026թ.**

ՀՐԱՄԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 25.05.2026 թվականի զեկուցագիրը, 08.04.2026 թվականին կնքված ՀՀ ԳՄ-ԳՀԱՇՁԲ-26/27 ծածկագրով պետական գնման պայմանագիրը, 27.05.2026 թվականի N 4629-26 ելից գրությամբ «Դ.Ջ.Ա.» ՍՊԸ-ին ուղարկված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը՝

«Դ.Ջ.Ա.» ՍՊԸ-ն, հանդիսանալով ՀՀ ԳՄ-ԳՀԱՇՁԲ-26/27 ծածկագրով պետական գնման պայմանագրի կողմ, պարտավորվել էր իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքները՝ պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը լրացել է 25.05.2026 թվականին, սակայն նշված օրվա դրությամբ աշխատանքները չեն կատարվել, պատվիրատուին չեն հանձնվել կատարված աշխատանքներ, չեն կազմվել հանձնման-ընդունման փաստաթղթեր, և պայմանագրով ստանձնած պարտավորությունները մնացել են ամբողջությամբ չկատարված:

Պայմանագրային պարտավորությունների չկատարման հիմքով, ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն, պայմանագիրը պատվիրատուի կողմից լուծվել է միակողմանի կարգով, որի վերաբերյալ «Դ.Ջ.Ա.» ՍՊԸ-ն 27.05.2026 թվականի N 4629-26 գրությամբ պատշաճ ծանուցվել է:

AnyScanner

«Դ.Ջ.Ա.» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է պայմանագրի լուծման և պայմանագրի ապահովման ու որակավորման ապահովման համաձայնագրերից բխող ֆինանսական պարտավորությունների կատարման անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ, ծանուցմամբ սահմանված տասնօրյա ժամկետում վերջինիս կողմից համապատասխան վճարումներ չեն իրականացվել և պարտավորությունների կատարումը հավաստող փաստաթղթեր պատվիրատուին չեն ներկայացվել

Գնահատելով վերոգրյալ փաստական հանգամանքները՝ արձանագրում եմ, որ «Դ.Ջ.Ա.» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը հանգեցրել է պայմանագրի միակողմանի լուծման, ինչը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հանդիսանում է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ինքնուրույն և բավարար իրավական հիմք:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«Դ.Ջ.Ա.» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սույն հրամանը և օրենքով նախատեսված փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացնել լիազորված մարմին:

Գնման ընթացակարգի				մասնակցի				Դատավիճառուի անվանումը	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	Գնման գինը ՀՀ դրամ	անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
ՀՀ ԳՄ-ԳՀԱՇՁԲ-26/27	1	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում	2882960	«Դ.Ջ.Ա.» ՍՊԸ	02331845	ք. Երևան Մալաթիա Սեբաստիա Կիլիկիա թ 46փ	27.05.2026 թ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ	ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և ՀՀ ԳՄ-ԳՀԱՇՁԲ-26/27 ծածկագրով կնքված պայմանագրի 8.11-կետը	

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ք. Գավառ